բազմաթիւ հազուստ, վրաններ, պայտ ու մեխ և այլն — հայկական թաղում էր, և հայերը չէին ուզում յանձնել: Այս հողի վրա բուռն վէճ ու կռիւ էր առաջացել երկու կողմերի միջև:

Պատիրակութիւններին մեծ դժուարութեամբ յաջողուեց հաշտեցնել կուռող կողմերը:

Մահմեդական շարժումների տեսակէտից, ինչպէս կը տեսնենք յետոյ, դրութիւնը անհամեմատ աւելի վատ էր Երևանի նահանգում, ուր արիւնահեղ ճակատամարտներ էին տեղի ունենում թուրք զինուած խուժանի և հայկական կանոնաւոր զօրամասերի միջև:

Վեհիբ փաշան ու կովկասեան մահմեդականները չատ լաւ գիտէին, թէ ինչ են անում: Նրանք ձգտում էին խառնափնթորել Կովկասը, կազմալուծել ճակատն ու թիկունքը և այդպիսով հեշտացնել թիւրք զօրքերի յառաջխաղացումը, որը սկսուեց յունուարի վերջերին:

Մօտ երկու ամսուայ զինադադարից յետոյ, նորից հայկական նահանգները դառնում էին թատերաբեմ պատերազմի, այս անգամ փաստօրէն թիւրքիայի և հայերի միջև. ռազմաճակատում այլեւս ռուսական մասեր գրեթէ չէին մնացել, և նրանց թողած դիրքերը գրաւել էր Հայկական Կորպուսը:

1918թ. տարեդլխին կովկասեան ճակատը ներկայացնում էր հետևեալ պատկերը.

Վանում կանգնած էր հայկական 5րդ հրացանաձիգ գունդը և Վանի երկու գնդերը՝ կազմուած տեղական բնակչութիւնից:

Խնուսում՝ հայկական 2րդ հրացանաձիգ գունդը, Խնուսի և Ղարաքիլիսայի գնդերը՝ նոյնպէս տեղացիներից:

Էրզրումում՝ Էրզրումի հետեւակ գունդը, հայկական առաջին հրացանաձիգ գունդը և 4րդ հրացանաձիգ գնդի մէկ գումարտակը, ինչպէս նաեւ բերդային մասեր:

Երզնկայում՝ Երզնկայի հետեւակ գունդը՝ 3 գումարտակներով և կամաւորական խմբեր՝ Մուրատի ղեկավարութեամբ:

Գեալֆիթում՝ Սեպուհի կամաւորները:

Տրապիզոնի շրջանում դեռ մնացել էին ռուսական վտիտ զօրամասեր, որոնք աստիճանաբար հեռանում էին Ռուսաստան: Գլխաւոր հրամանատարութեան կարգադրութեամբ Գիւմիւշխանէ–Տրապիզոն դիծը պէտք է գրաւէին վրացական զօրամասերը, բայց չգրաւեցին:

Բացի այս մասերից, դանդաղ վայրերում ցրուած էին նաև փոքրիկ կամաւորական խմբեր, որոնք օժանդակ դեր էին կատարում և օգնում էին ժողովրդի և թիկունքային հիմնարկութիւնների ու հաղորդակցութեան գծերի պաշտպանութեան:

Հայկական կորպուսի մի մասը դասաւորուած էր թիկունքի դանդաղ քաղաքներում. Երեւանում՝ հայկական 3րդ և 6րդ հրացանաձիգ գնդերը և 4րդ գնդի մէկ գումարտակը. Կարսում՝ բերդային մասերը, որոնք կազմակերպման վիճակում էին դեռ. Ալեքսանդրապոլում՝ հայկական 7րդ և 8րդ